ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ Սամվել Ավետիքյանի՝ Ղրղզստանի Հանրապետություն կատարած այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Սամվել Ավետիքյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Բիշքեկ, Ղրղզստանի Հանրապետություն, 2018 թվականի ապրիլի 3-5-ը

4. Հրավիրող կողմը՝

ՌԴ դաշնային մաքսային ծառայության ղեկավար Վ.Ի. Բուլավին:

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 26-րդ նիստին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Նիստի ընթացքում ընդունվել են թվով 33 որոշումներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Իրականացվել են երկկողմ հանդիպումներ ԵՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների հետ, քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նիստի ընթացքում ընդունվել են թվով 33 որոշումներ, մասնավորապես Մաքսային միության անդամ պետությունների միավորված կոլեգիային կից աշխատանքային խմբերի 2017թ. գործունեության և ապրանքների դասակարգման հարցերով աշխատանքային խմբի կազմում փոփոխություններ կատարելու մասին, ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների և միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների նկատմամբ հարցումների իրականացման ժամկետների վերաբերյալ, օտարերկրյա ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման

տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման պայմանների խախտման քանակի նվազեցմանն ուղղված միջոցների վերաբերյալ, ԵՏՄ անդամ պետություններում ապրանքների հետբացթողումային հսկողություն իրականացնող ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետության միասնական ցուցանիշի հաշվարկման մեթոդիկայի և եռամսյակային փոխանակության նպատակով այդ հսկողության արդյունքների տեղեկությունների կազմի հաստատման վերաբերյալ, միասնական տարանցիկ համակարգի կատարելագործման և մատակարարումների շղթայի անվտանգության ապահովման վերաբերյալ, մաքսային ստուգումներ իրականացնելիս հայտնաբերված ԵՏՄ իրավունքի մաս կազմող, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող միջազգային պայմանագրերի և այլ ակտերի իրավախախտումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգի հաստատման վերաբերյալ, Մաքսային միության հանձնաժողովի 18.06.2010թ. թիվ 289 որոշմամբ հաստատված տարանցիկ փոխադրման հայտարարագրի լրացման կարգի մասին ուղեցույցում փոփոխություններ կատարելու վերաբերյալ և այլն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպման որոշումները և առաջարկությունները կարտացոլվեն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատանքային ծրագրերում: Հաջորդ նիստը տեղի է ունենալու 2018 թվականի հունիսի 15-ին Ղազախստանի Հանրապետությունում:

10. Գործուղվողը՝

Սամվել Ավետիքյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

07.04.2018թ.